ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/54 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

«14» օգոստոսի 2019թ.
ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքեր-շինությունների պահպանման բաժնի պետ.

**Անդամներ՝**

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)*

Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ,

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

*Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)*

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.

Բացակայում է.

Գոհար Մեսրոպյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը և մասնակիցների կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ ենթակետով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, սակայն մասնակիցը ներկայացրել է Կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Ընկերությունների կողմից ներկայացված հայտարարությունները որակվեցին իրականությանը համապատասխանող:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակիցներ ճանաչել.

- «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին՝ 1 չափաբաժնով,
- «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ին՝ 2 չափաբաժնով:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3) Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/54 ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ին:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | | Հ. Պողոսյան |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | | Գ. Բոյաջյան |
| | | Հ. Ծատուրյան |
| | | Տ. Ալեքսանյան |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | | Ա. Եղիազարյան |